ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-9/25-1

ք. Երևան «27» հունիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***13,580,100 (տասներեք միլիոն հինգ հարյուր ութսուն հազար հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից

հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**Ք. Երևան, Արզումանյան 32-10**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան » ՓԲԸ**
Հ/Հ 900011144129	**Հ/Հ 002182558001**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 01210095**
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	**տնօրեն**
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	**Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/25-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
1.	Լվացող հեղուկ CA Clean	1 x 50 մլ քանակի, գործարանային փաթեթավորումով տուփ	CA-CLEAN I 50 ML	Sysmex	Գերմանիա
2.	Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Troponin T hs STAT Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
3.	ԱԿՏԳ 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	ACTH Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
4.	Պրոլակտին 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Prolactin G2 Elecsys cobas e 100 V2.1	Roche Diagnostics	Գերմանիա
5.	Պրոգեստերոն 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Progesterone G3 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
6.	Լյուտեինիզացնող հորմոն 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	LH Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
7.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	FSH Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
8.	Ռեակտիվ DHEA-S 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	DHEA-S Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
9.	Տեստոստերոն 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Testosterone G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
10.	Էստրադիոլ 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Estradiol G3 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
11.	Anti-Թիրեոգլոբուլին 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-TG Elecsys cobas e 100 V4	Roche Diagnostics	Գերմանիա
12.	Anti-TPO ռեակտիվ 100 թեսթ	100 քանակի թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-TPO Elecsys cobas e 100 V3	Roche Diagnostics	Գերմանիա
13.	Ինսուլին 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Insulin Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
14.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն - PSA	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Total PSA Elecsys cobas e 100 V2.1	Roche Diagnostics	Գերմանիա
15.	Բետա խորիոն գոնադոտրոպին	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	HCG+beta Elecsys cobas e 100 V2	Roche Diagnostics	Գերմանիա
16.	Ալֆա ֆետոպրոտեին 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	AFP Elecsys cobas e 100 V1.1	Roche Diagnostics	Գերմանիա
17.	Պարա թիրոիդ հորմոն PTH 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	PTH Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
18.	CA 125 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	CA 125 G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա

19.	**CA 15-3 100 թեսթ**	**Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:**	**CA 15-3 G2 Elecsys cobas e 100**	**Roche Diagnostics**	**Գերմանիա**
20.	**CA 19-9** 100 թեսթ	**Հավաքածուն պարունակում է 100 թեսթ,** գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	CA 19-9 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
21.	Ֆերիտին 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Ferritin Elecsys cobas e 100 V2	Roche Diagnostics	Գերմանիա
22.	Վիտամին B12 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Vitamin B12 G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
23.	Anti-CCP Անտի ցիկլիկ ցիտրուլինային պեպտիդ 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-CCP Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
24.	Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-HBc G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
25.	ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-HAV IgM Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
26.	Տոքսոպլազմա IgM 100թեստ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Toxo IgM Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
27.	Տոքսոպլազմա IgG 100թեստ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Toxo IgG Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
28.	Ցիտոմեգալովիրուս IgM 100թեստ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	CMV IgM Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
29.	Ցիտոմեգալովիրուս IgG 100թեստ	Հավաքածուն պարունակում է 100 թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	CMV IgG Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
30.	Պրոլակտին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Prolactin G2 CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
31.	Լյուտեինիզացնող հորմոն CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	LH G2 CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
32.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	FSH CS Elecsys V2	Roche Diagnostics	Գերմանիա
33.	Anti-TPO ռեակտիվ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-TPO CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
34.	ՏրիյոդթիրոնինT3 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	T3 CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
35.	Տրիյոդթիրոնին FT3 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	FT3 G3 CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա

36.	**Թիոքսին T4 CS**	**Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:**	**T4 CS Elecsys V2**	**Roche Diagnostics**	**Գերմանիա**
37.	Թիոքսին FT4 ազատ CS	**Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար,** գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	FT4 G2 CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
38.	Թիրեոտրոպ հորմոն TSH CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	TSH CS Elecsys V2	Roche Diagnostics	Գերմանիա
39.	C-Պեպտիդ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	C-Peptide CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
40.	Ինսուլին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Insulin CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
41.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -- PSA CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Total PSA G2 CS Elecsys V2.1	Roche Diagnostics	Գերմանիա
42.	Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	CEA CS Elecsys V2	Roche Diagnostics	Գերմանիա
43.	VITEK 2 GN 20 քարտ	Նախատեսված է VITEK սարքի շահագործման համար, գրամ բացասական մանրէների տարբերակման քարտ, 20 հատ, գործարանային փաթեթավորումով	VITEK 2 GN 20 card	BioMnrieux	Ֆրանսիա

- Ապրանքները պետք է ունենան

1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր, որի պատճենը ներկայացվում է մատակարարման ժամանակ:

2.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: (ներկայացվում է մատակարարման ժամանակ):

3.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

Այն չափաբաժինները, որոնց չափման միավորը սահմանված է «փուլ» կամ «հավաքածու» և նշված չէ քանակական պարունակությունը հասկանալ N1

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԱՌՔՍԱԴՐՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գին/ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումն ըստ 2018թ. հետևյալ եռամսակների	
						Երրորդ եռամսյակ	Չորրորդ եռամսյակ Ոչ ուշ քան 10.12.2018թ.
1.	Լվացող հեղուկ CA Clean	հավաքածու	20	20,700	414,000	10	10
2.	Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեսթ	հավաքածու	1	100,700	100,700	1	
3.	ԱԿՏԳ 100 թեսթ	հավաքածու	2	164,300	328,600	1	1
4.	Պրոլակտին 100 թեսթ	հավաքածու	7	61,300	429,100	3	4
5.	Պրոգեստերոն 100 թեսթ	հավաքածու	2	61,300	122,600	1	1
6.	Լյուտեինիզացնող հորմոն 100 թեսթ	հավաքածու	4	48,400	193,600	2	2
7.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 100 թեսթ	հավաքածու	4	48,400	193,600	2	2
8.	Ռեակտիվ DHEA-S 100 թեսթ	հավաքածու	4	73,100	292,400	2	2
9.	Տեստոստերոն 100 թեսթ	հավաքածու	4	68,400	273,600	2	2
10.	Էստրադիոլ 100 թեսթ	հավաքածու	4	57,000	228,000	2	2
11.	Anti-Թիրեոգլոբուլին 100 թեսթ	հավաքածու	15	85,500	1,282,500	7	8
12.	Anti-TPO ռեակտիվ 100 թեսթ	հավաքածու	15	85,500	1,282,500	7	8
13.	Ինսուլին 100 թեսթ	հավաքածու	4	77,900	311,600	2	2
14.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA	հավաքածու	10	84,500	845,000	5	5
15.	Բետա խորիոն գոնադոտրոպին	հավաքածու	3	64,600	193,800	1	2
16.	Ալֆա ֆետոպրոտեին 100 թեսթ	հավաքածու	3	84,500	253,500	1	2
17.	Պարա թիրոիդ հորմոն PTH 100 թեսթ	հավաքածու	1	104,000	104,000	1	
18.	CA 125 100 թեսթ	հավաքածու	3	114,000	342,000	1	2
19.	CA 15-3 100 թեսթ	հավաքածու	2	93,000	186,000	1	1
20.	CA 19-9 100 թեսթ	հավաքածու	2	114,000	228,000	1	1
21.	Ֆերիտին 100 թեսթ	հավաքածու	2	75,900	151,800	1	1
22.	Վիտամին B12 100 թեսթ	հավաքածու	2	88,300	176,600	1	1
23.	Anti-CCP Անտի ցիկլիկ ցիտրուլինային պեպտիդ 100 թեսթ	հավաքածու	3	274,000	822,000	1	2
24.	Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ	հավաքածու	15	76,000	1,140,000	7	8
25.	ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ	հավաքածու	1	121,000	121,000	1	
26.	Տոքսոպլազմա IgM 100թեստ	հավաքածու	1	80,700	80,700	1	
27.	Տոքսոպլազմա IgG 100թեստ	հավաքածու	2	80,700	161,400	1	1
28.	Ցիտոմեգալովիրուս IgM 100թեստ	հավաքածու	1	104,000	104,000	1	
29.	Ցիտոմեգալովիրուս IgG 100թեստ	հավաքածու	2	104,000	208,000	1	1
30.	Պրոլակտին CS	հավաքածու	4	30,000	120,000	2	2
31.	Լյուտեինիզացնող հորմոն CS	հավաքածու	2	30,000	60,000	1	1
32.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն CS	հավաքածու	2	30,000	60,000	1	1
33.	Anti-TPO ռեակտիվ CS	հավաքածու	5	25,500	127,500	2	3
34.	ՏրիյոդթիրոնինT3 CS	հավաքածու	2	30,000	60,000	1	1

35.	Տրիյոդթիրոնին FT3 CS	հավաքածու	3	30,000	90,000	1	2
36.	Թիրոքսին T4 CS	հավաքածու	2	30,000	60,000	1	1
37.	Թիրոքսին FT4 ազատ CS	հավաքածու	4	30,000	120,000	2	2
38.	Թիրեոտրոպ հորմոն TSH CS	հավաքածու	7	30,000	210,000	3	4
39.	C-Պեպտիդ CS	հավաքածու	2	31,000	62,000	1	1
40.	Ինսուլին CS	հավաքածու	2	30,000	60,000	1	1
41.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն--PSA CS	հավաքածու	4	30,000	120,000	2	2
42.	Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA CS	հավաքածու	2	30,000	60,000	1	1
43.	VITEK 2 GN 20 քարտ	հավաքածու	20	90,000	1,800,000	10	10
Ընդամենը					**13,580,100**		

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/25-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդ	Ընդհանուր գին /դրամ/	Ըստ 2018թ ամիսների՝ աճողական					
				հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.18թ.-ը
1.	Լվացող հեղուկ CA Clean	33691162/162/10/4	414,000	207,000	207,000	207,000	414,000	414,000	414,000
2.	Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեսթ	33691162/163/10/4	100,700	100,700	100,700	100,700	100,700	100,700	100,700
3.	ԱԿՏԳ 100 թեսթ	33691162/164/10/4	328,600	164,300	164,300	164,300	328,600	328,600	328,600
4.	Պրոլակտին 100 թեսթ	33691162/165/10/4	429,100	183,900	183,900	183,900	429,100	429,100	429,100
5.	Պրոգեստերոն 100 թեսթ	33691162/166/10/4	122,600	61,300	61,300	61,300	122,600	122,600	122,600
6.	Լյուտեինիզացնող հորմոն 100 թեսթ	33691162/167/10/4	193,600	96,800	96,800	96,800	193,600	193,600	193,600
7.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 100 թեսթ	33691162/168/10/4	193,600	96,800	96,800	96,800	193,600	193,600	193,600
8.	Ռեակտիվ DHEA-S 100 թեսթ	33691162/169/10/4	292,400	146,200	146,200	146,200	292,400	292,400	292,400
9.	Տեստոստերոն 100 թեսթ	33691162/170/10/4	273,600	136,800	136,800	136,800	273,600	273,600	273,600
10.	Էստրադիոլ 100 թեսթ	33691162/171/10/4	228,000	114,000	114,000	114,000	228,000	228,000	228,000
11.	Anti-Թիրեոգլոբուլին 100 թեսթ	33691162/178/10/4	1,282,500	598,500	598,500	598,500	1,282,500	1,282,500	1,282,500
12.	Anti-TPO ռեակտիվ 100 թեսթ	33691162/179/10/4	1,282,500	598,500	598,500	598,500	1,282,500	1,282,500	1,282,500
13.	Ինսուլին 100 թեսթ	33691162/181/10/4	311,600	155,800	155,800	155,800	311,600	311,600	311,600
14.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA	33691162/182/10/4	845,000	422,500	422,500	422,500	845,000	845,000	845,000
15.	Բետա խորիոն գոնադոտրոպին	33691162/183/10/4	193,800	64,600	64,600	64,600	193,800	193,800	193,800
16.	Ալֆա ֆետոպրոտեին 100 թեսթ	33691162/184/10/4	253,500	84,500	84,500	84,500	253,500	253,500	253,500
17.	Պարա թիրոիդ հորմոն PTH 100 թեսթ	33691162/187/10/4	104,000	104,000	104,000	104,000	104,000	104,000	104,000
18.	CA 125 100 թեսթ	33691162/189/10/4	342,000	114,000	114,000	114,000	342,000	342,000	342,000
19.	CA 15-3 100 թեսթ	33691162/190/10/4	186,000	93,000	93,000	93,000	186,000	186,000	186,000
20.	CA 19-9 100 թեսթ	33691162/191/10/4	228,000	114,000	114,000	114,000	228,000	228,000	228,000
21.	Ֆերիտին 100 թեսթ	33691162/193/10/4	151,800	75,900	75,900	75,900	151,800	151,800	151,800
22.	Վիտամին B12 100 թեսթ	33691162/194/10/4	176,600	88,300	88,300	88,300	176,600	176,600	176,600
23.	Anti-CCP Անտի ցիկլիկ ցիտրուլինային պեպտիդ 100 թեսթ	33691162/195/10/4	822,000	274,000	274,000	274,000	822,000	822,000	822,000
24.	Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ	33691162/200/10/4	1,140,000	532,000	532,000	532,000	1,140,000	1,140,000	1,140,000
25.	ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ	33691162/201/10/4	121,000	121,000	121,000	121,000	121,000	121,000	121,000
26.	Տոքսոպլազմա IgM 100թեստ	33691162/202/10/4	80,700	80,700	80,700	80,700	80,700	80,700	80,700
27.	Տոքսոպլազմա IgG 100թեստ	33691162/203/10/4	161,400	80,700	80,700	80,700	161,400	161,400	161,400
28.	Ցիտոմեգալովիրուս IgM 100թեստ	33691162/204/10/4	104,000	104,000	104,000	104,000	104,000	104,000	104,000
29.	Ցիտոմեգալովիրուս IgG 100թեստ	33691162/205/10/4	208,000	104,000	104,000	104,000	208,000	208,000	208,000
30.	Պրոլակտին CS	33691162/208/10/4	120,000	60,000	60,000	60,000	120,000	120,000	120,000
31.	Լյուտեինիզացնող հորմոն CS	33691162/210/10/4	60,000	30,000	30,000	30,000	60,000	60,000	60,000
32.	Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն CS	33691162/211/10/4	60,000	30,000	30,000	30,000	60,000	60,000	60,000
33.	Anti-TPO ռեակտիվ CS	33691162/215/10/4	127,500	51,000	51,000	51,000	127,500	127,500	127,500
34.	ՏրիյոդթիրոնինT3 CS	33691162/218/10/4	60,000	30,000	30,000	30,000	60,000	60,000	60,000

35.	Տրիյոդթիրոնին FT3 CS	33691162/219/10/4	90,000	30,000	30,000	30,000	90,000	90,000	90,000
36.	Թիրոքսին T4 CS	33691162/220/10/4	60,000	30,000	30,000	30,000	60,000	60,000	60,000
37.	Թիրոքսին FT4 ազատ CS	33691162/221/10/4	120,000	60,000	60,000	60,000	120,000	120,000	120,000
38.	Թիրեոտրոպ հորմոն TSH CS	33691162/222/10/4	210,000	90,000	90,000	90,000	210,000	210,000	210,000
39.	C-Պեպտիդ CS	33691162/223/10/4	62,000	31,000	31,000	31,000	62,000	62,000	62,000
40.	Ինսուլին CS	33691162/224/10/4	60,000	30,000	30,000	30,000	60,000	60,000	60,000
41.	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն --PSA CS	33691162/225/10/4	120,000	60,000	60,000	60,000	120,000	120,000	120,000
42.	Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA CS	33691162/229/10/4	60,000	30,000	30,000	30,000	60,000	60,000	60,000
43.	VITEK 2 GN 20 քարտ	33691162/241/10/4	1,800,000	900,000	900,000	900,000	1,800,000	1,800,000	1,800,000
Ընդամենը			**13,580,100**	**6,579,800**	**6,579,800**	**6,579,800**	**13,580,100**	**13,580,100**	**13,580,100**

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-9/25-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-9/25-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն